

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2017 թվականի առաջին եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3425 թղթակցություն, առաքվել՝ 2102 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 1 ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 315, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 370, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 752, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 930, քաղաքացիներից՝ 1052 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 5: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 3, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 49, ՀՀ նախարարություններից՝ 7, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 1 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017թ. առաջին եռամսյակում կատարվել է 196 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: